



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ**

-- ----- 2020 թվականի №...Ա
քաղ. Երևան

**«ՄՎԻԹՈՒԵՅ ՏՐԱՆՍ» ՍԱՀՄԱՆԱՓՈՒՄ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐԻ ՓՈՒՍՆՑՈՒՄ
ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2010 թվականի օգոստոսի 4-ի №414Ա որոշմամբ «ՄՎԻԹՈՒԵՅ ՏՐԱՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված ռադիոհաճախականության օգտագործման №0818 թույլտվության գործողության ժամկետը սահմանված է մինչև 2020 թվականի օգոստոսի 4-ը, և Ընկերությունն այն երկարաձգելու հայտով չի դիմել Հանձնաժողով,

բ) Ընկերությունը պատշաճ կարգով չի կատարել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 17.1-րդ հոդվածով սահմանված ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների վճարման պարտավորությունը,

գ) Հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 26-ի №763Ա որոշմամբ Ընկերությունը պարտավորեցվել է մինչև 2018 թվականի դեկտեմբերի 26-ը ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով հաշվարկված 296 038 (երկու հարյուր ինսուսնվեց հազար երեսունութ) դրամ պարտքը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

դ) Հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 24-ի №502Ա որոշմամբ Ընկերությունը պարտավորեցվել է 2018 թվականի դեկտեմբերի 27-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 24-ն ընկած ժամանակահատվածի համար ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով հաշվարկված 283 983 (երկու հարյուր ութսուներեք հազար

ինը հարյուր ութսուներեք) դրամ պարտքը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

և հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, 17.1 հոդվածը, «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի N°231Ն որոշումը՝ **Հանձնաժողովը որոշում է.**

1. Պարտավորեցնել Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում N°900005281812 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցել ռադիոհաճախականության օգտագործման վճարի մասով 2019 թվականի դեկտեմբերի 25-ից մինչև 2020 թվականի օգոստոսի 4-ը հաշվարկված 235 922 (երկու հարյուր երեսունհինգ հազար ինը հարյուր քսաներկու) դրամ պարտքը, որից 169 022 (հարյուր վաթսունինը հազար քսաներկու) դրամը ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարն է, իսկ 66 900 (վաթսունվեց հազար ինը հարյուր) դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը:
2. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է.
 - 1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու այն.
 - 2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Գ. ԲԱՂԲԱՍՅԱՆ